ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 56

«11» մայիսի 2021 թվական **գյուղ Մայիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄԵՂՄԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով դրույթներով, և Շվեյցարիայի համագործակցության զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման նախարարության աջակցությամբ, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համատեղ համակարգմամբ ՀՀ խոշորացված համայնքներին տրամադրվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է**

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքում համավարակի հետևանքները մեղմելուն ուղղված դրամաշնորհային հիմնադրամի հայտին՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել որ՝

1)ծրագրի արժեքը կազմում է 13340000 (տասներեք միլիոն երեք հարյուր երեսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 1334000 (մեկ միլիոն երեք հարյուր երեսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամը համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը՝ Մարմաշեն համայնքի 2021 թվականի բյուջեի 01.6.1. <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> ծրագրի գործառնական դասակարգման (4657) «Այլ կապիտալ դրամաշնորհներ» տնտեսական դասակարգման հոդվածից,

2)ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Մարմաշեն համայնքի ղեկավարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	----------	----------	----------
Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	----------	----------	----------
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	----------
Պ. ՍԱՀԱԿՅԱՆ՝	----------	----------	----------
Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԱՐՇԱԿՅԱՆ

«11» մայիսի 2021 թվական

գյուղ Մայիսյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի
մայիսի 11-ի թիվ 56 որոշման

Համավարակի հետևանքները մեղմելուն ուղղված դրամաշնորհային հիմնադրամի հայտ

Հայտի հետ կապված բոլոր հարցերով դիմել Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին (բջջ հեռ. +37498799775 էլ. փոստի հասցե marmashen.shirak@mail.ru)

կամ տնտեսական զարգացման պատասխանատու Սենիկ Մանուկյանին (բջջ հեռ. +37493063080 էլ. փոստի հասցե senal74@mail.ru)

1. Հայտատու համայնք/ համայնքներ	ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք
2. Ամսաթիվ	10 մայիսի 2021թվական
3. Ծրագրի անվանում	Հաղթահարենք միասին համայնքում սոցիալ-տնտեսական ճողվածքը
4. Ծրագրի նկարագրություն	2017 թվականի նոյեմբեր ամսին ՀՀ իրականացրած համայնքների խոշորոցման գործընթացի արդյունքում Մարմաշեն համայնքը խոշորացվեց՝ ունենալով 16 գյուղական բնակավայր, 13079 բնակիչ, որից 5346 կանայք են, որից 149 հաշմանդամ են, 392-ը՝ նպաստառու, ընդհանուր 3650 հոգի՝ ծայրահեղ աղքատ: Մարմաշեն համայնքը զբաղեցնում է 19257,91 հա տարածք: Բազմաբնակավայր համայնքն ունի բարդ ռելիեֆային կտրվածք, ճանապարհների մոտ 90%-ը խճային կամ հողային են (միջբնակավայրային ճանապարհ՝ 63.5կմ, ներբնակավայրային՝ 107.5կմ, դաշտամիջյան՝720կմ, որոնք պարբերաբար վերանորագման կարիք ունեն: Ձմեռը ցրտաշունչ է՝ 5-6 ամիս տևողությամբ, ջերմաստիճանը հասնում է մինչև 35 աստիճանի: Ցանկացած տնտեսապես զարգացած երկրի հիմքը՝ առողջ և ինքնաբավ գյուղատնտեսությունն է: Գլոբալիզացման, տնտեսական անկախության ռազմավարության մեջ անհնար է առանց աճող ժամանակակից սարքերի, տեխնոլոգիաներով հագեցած գյուղատնտեսության: Ծրագրի հիմնական նպատակն է՝նպաստել Մարմաշեն համայնքի կառուցողական զարգացմանը: Վերսկսել ու շահագործել ի նպաստ խոշորացված համայնքի տնտեսական առաջընթացի գյուղանտնտեսության, հողագործության ճյուղերի: Վարելահողերը կազմում են համայնքի ընդհանուր մակերեսից 5993,02 հա: Հիմնականում պետք է լայմանածավալ որակյալ վերականգնողական գործողություններ իրականացնել վարելահողերի վերականգնման համար: Գութանով խորը վար,

	կուլտիվացիա, պարարտանույթերով թարմացում, և տարբեր միջոցառումներ վնասատուներից բերքի պահպանման համար: Իրականացվելիք գործողությունները բազմաբովանդակ են, և կրկնվող: Անմիջական շահառուները կլինեն Մարմաշեն խոշորացված համայնքների 16 բնակավայրերի բնակիչներ, քանի որ գործողությունները միտված են ընդհանուր վարելահողերի վերականգնմանը: Պետք է թարմացնել նյութատեխնիկական բազան ժամանակակից գյուղատնտեսական գործիքներով և ամենակարևորը՝ զորավիգ դառնալ սոցիալական բեռի տակ ճգնող գյուղացու ընտանիքին: Մարմաշեն խոշորացված համայնքի ազգաբնակչության զբաղմունքը և եկամուտը հիմնականում գոյանում է գյուղատնտեսական աշխատանքներից՝ անասնապահությունը և դաշտավարությունը համայնքում զարգացնելու, գրավիչ դարձնելու համար պետք են նոր ժամանակակից գյուղատնտեսական գործիքներ: Համայնքապետարանի տարիների աշխատանքը տվել է իր դրական արդյունքները: 2020-2021 թվականներին համայնքապետարանը ՀՏՋՀ նվիրաբերությունից և ԵՄ կողմից հայտարարված դրամաշնորհի միջոցներով, որպես սեփականություն է ստացել ծանր և թեթև տեխնիկաներ: Ստեղծել է ՀՈԱԿ, որն էլ իրականացնում է՝ սելավատարների մաքրման, նոր որոգման ցանցի ստեղծման, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման և այլ աշխատանքներ:
5. Հայտի մշակման գործընթացի մասնակիցներ	ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյան, համայնքի ղեկավարի օգնական (տնտեսական զարգացման պատասխանատու) Սենիկ Մանուկյան, ավագանու անդամներ:
6. Ծրագրի նպատակը և խնդիրները	Ծրագրի հիմնական նպատակներն են՝ 1. Իրականացնել վարչական տարածքներում հարկադիր պարապուրտի մատնված վարելահողերի կենդանացում: 2.Զորավիգ լինել այն ընտանիքներին, որոնք ուզում են զբաղվել հողագործությամբ, բայց չունեն նախնական ներդրման համար ֆինանսական միջոցներ: 3. Կանխել սոցիալ-տնտեսական աղետը համայնքում: 4. Կանխել միգրացիան գյուղական բնակավայրերից: 5. Ստեղծել մրցակցային դաշտ, ապահովել գների նվազեցում գյուղատնտեսական աշխատանքների իրականացման ոլորտում (վար, կուլտիվացիա, ցանք, սրսկման միջոցառումներ): Այս նպատակները իրականացնելու համար պահանջվում են երկարաժամկետ ջանքեր և ներդրումներ: Ներկա պահին համայնքապետարանն արդեն ունի իր տեխնիկական բազայում 2 տրակտոր TH1304 և TH1804, որոնք 2020 թվականի արտադրության են, և ըստ օգտագործման նպատակայնության նախատեսված են ձմեռային ամիսներին գյուղամիջյան անանցանելի ճանապարհների մաքրման համար: Սակայն համապատասխան գործիքների առկայության դեպքում դրանցով կիրականացնենք գյուղատնտեսական աշխատանքներ: Միաժամանակ 2 տրակտորի համար պետք է՝ գութան 3-4 խոփով, կուլտիվատոր, շարքացան, սրսկիչ: Այս համապատասխան գործիքների առկայության դեպքում կիրականացվի՝ մարտ-ապրիլ, օգոստոս-հոկտեմբեր ամիսներին հողային շերտի փորում, կուլտիվացիա, ցանում: Մայիս –հուլիս

	կիրականացնենք վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ: Հիմնականում կօգտվեն այն ընտանիքները, որոնք դիմել են համայնքապետարան՝ օգնություն տրամադրելու խնդրանքով: Ծրագրի հաստանման և գործիքների առկայության դեպքում կսկսենք լայնածավալ միջոցառումները վարչական ղեկավարների հետ՝ առողջ բանականությամբ, աշխատելու պատրաստ ընտանիքների հետ: Ըստ մեր որդեգրած քաղաքականության՝ մենք չենք տրամադրոմ միանվագ օգնություն, եթե հնարավոր է մենք տրամադրում ենք գործիքներ, որոնցով կկարողանանք շտկել սոցիալ-տնտեսական իրավիճակը ընտանիքում, դիտարկելով ծրագրային զարգացման հեռանկարները: Այս ամենին հասնելու համար ընտանիքների հետ կիրականացվեն բացատրողական աշխատանքներ, կտրամադրվեն տեխնիկա-սարքավորումները մեխանիզատորներով, կիրականացվի ընտրված ընտանիքներին պատկանող հողատարածքների կենդանացման ծրագիրը:
7. Իրականացման ժամկետ	Հայտի հաստատման և համապատասխան գործիքների ստացման դեպքում, կիրականացվի 2021 թվականին աշնանացանի, 2022 թվականի գարնանացանի և աշնանացանի աշխատանքները: Կիրականացվեն բերքը վնասատուներից պաշտպանելու միջոցառումներ: Գյուղատնտեսության աջակցման ռազմավարությանն ուղղված աշխատանքները համայնքում կիրականացվեն նաև ծրագրի ավարտից հետո:
8.Իրականացման վայրի հասցեն	ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք: (Համայնքապետարանի հասցեն՝ գ. Մայիսյան 1 փող.29)
9.Ակնկալվող արդյունքներ (այդ թվում՝ ազդեցությունը համայնքի այլ ոլորտների վրա և միջանկյալ արդյունքներ, օր.՝ ժամանակավոր աշխատատեղեր ծրագրի իրականացման ընթացքում)	Ծրագրի իրականացման արդյունքները կախված են թիմային աշխատանքների որակական և քանակական բաղադրիչներից: Ցանկացած արդյունքի դեպքում կունենանք տարեկան 40-50 ընտանիքների սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական կայունություն: Վարչական տարածքներում կվերականգնենք 40-50 հա վարելահող, հետագա օգտագործման համար: Դժվար է տոկոսային եկամտաբերություն հաշվարկել՝ այդ ամենի վերլուծությունը կարելի է իրականացնել ծրագրի իրականացման ընթացքում, կամ հետո: Այդ վերլուծության որակը կախված է նաև տվյալ տարվա բերքատվությունից, հանրապետությունում ցանվող և հավաքվող կուլտուրաների քանակից, ներկրման քանակներից և այլն: Կստեղծվեն նաև ժամանակավոր աշխատատեղեր բերքի հավաքման, որակական բաժանման և պահեստավորման շրջանում: Ծրագրի շարունակականությունն ապահովելու համար, 10 ընտանիքների հետ կիրականացվի ապրանքափոխանակության մոդելը: Այն հիմք կհանդիսանա վարչական տարածքներում ընտրված կուլտուրաների ցանման համար, որպեսզի կարողանանք վերահսկել ապրանքատեսականիների արտադրման տեսականին և քանակությունը:
10.Պատասխանատուներ *(այդ թվում՝ համայնքապետարանից դուրս)*	Համայնքի ղեկավար, տնտեսական զարգացման պատասխանատու, վարչական ղեկավարներ, ավագանի, ընտրված ընտանիքներ:
11. Հայտատու համայնք(ներ)ի ՏԱՊ-(եր)ի եւ բյուջեի համապատասխան հատվածը, որտեղ արտացոլված է ներկայացվող ծրագիրը	Համայնքապետարանի բյուջեում նախատեսված և հաստատված է ծրագրերի դեպքում իրականացնել 76.307.800 դրամի ծախս: Հաստատված է ՏԱՊ-ում և համապատասխանաբար ծրագրային բյուջեում: *(«Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բաժին, «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հատված էջ 4657)*
12. Ծրագրի ընդհանուր արժեքը	Գործիքներ տրակտոր TH1304 համար 1. Գութան 3 խոփ – 750.000 դրամ

	2. Կուլտիվատոր 3.6-4 մ լայնքով – 2.570.000 դրամ 3. Սրսկիչ 600լ և 10 մ թևերի բացվածքով – 1.100.000 դրամ Գործիքներ տրակտոր TH1804 համար 1. Գութան 4 խոփ – 1.100.000 դրամ 2. Կուլտիվատոր 3.6-4 մ լայնքով – 2.570.000 դրամ 3. Շարքացան 3.6մ լայնքով – 5.250.000 դրամ Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 13.340.000 դրամ:
13. Հայտավորվող ֆինանսական միջոցներ	Դրամաշնորհի ակնկալվող գումարի չափը՝ 12.006.000 դրամ:
14.Համաֆինանսավորման չափն ու ձևը	Համայնքապետարանը կիրականացնի ընդհանուր ծրագրային գումարի 10 տոկոսի համաֆինանսավորում, նախնական հաշվարկներով՝ 1.334.000 դրամ: *(Գնման գործընթացի ընթացքում գնային փոփոխությունների դեպքում դրամաշնորհից հավելյալ գումար չի պահանջվի, այն կլրացվի համայնքապետարանի բյուջեից)*
15.Այլ լրացուցիչ տեղեկություններ և տվյալներ	Մարմաշեն համայնքի վարչական տարածքը չի հանդիսանում սահմանամերձ, կամ բարձր լեռնային բնակավայր:
Պահանջվող փաստաթղթեր	
16.Ավագանու նիստի արձանագրություն	Ավագանու նիստի արձանագրություն N
17.Համայնքի բյուջեից քաղվածք՝ ի վկայություն հայտավորվող ծրագրի համաֆինանսավորումը նախատեսած լինելու մասին	*Կարգավորված է կետ 11-ով:*
18.Միջհամայնքային ծրագրի դեպքում համագործակցության հուշագիր / համաձայնագիր	*Հայտը միջհամայնքային չի դասակարգվում:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ